ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

««Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ցերեկային կենտրոնում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

h/h	Մատուցվող ծառայության անվանումը	Ծառայություն ստացած անձանց թիվը
1.	հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը	25/25
1.1	այդ թվում՝ կին	22/22
1.2	այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան	0
1.2.1	այդ թվում՝ կին	0
1.2.2	18-40 տարեկան	0
1.2.3	40-65 տարեկան	0
1.3	65 տարեկանից բարձր	25/25
2.	մեկանգամյա սննդի տրամադրում	25
3.	կարիքի գնահատում	25
4.	Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում	-
5.	Խմբակների կազմակերպում	25
5.1	*Թաղիքագործություն*	7
5.2	*Մտքի թռիչք*	12
5.3	*Ստեղծագործ ձեռքեր*	12
5.4	*Երգ*	8
6.	Մշակութային միջոցառումների կազմակերպում	25
6.1	Այդ թվում՝ կենտրոնից դուրս	12
7.	Այլ ծառայություն • բուժքույրի ծառայություններ • լվացքատան ծառայություններ • լոգանքի ծառայություններ • վարսահարդարման ծառայություն	 25 15 15 23

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան _____

«04» ապրիլի 2023 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

_____
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

_____
(ստորագրություն)

Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11002/23-ԼՎ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Վանաձոր)
Դրամաշնորհի N	«1032-11002/23-ԼՎ»
Դրամաշնորհատու կազմակերպություն	ԱՍՀՆ
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	03.01.2023 - 31.12.2023
Հաշվետու ժամանակահատված	01.07.2023 - 30.09.2023
Ներկայացման օր	06.10.2023
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Հասմիկ Հովսեփյան, ծրագրի համակարգող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գործողություններն են.

- Շահառուների կարիքի վերագնահատում և Անհատական սոցիալական պլանների վերանայում
- Ծառայությունների մատուցում՝ ըստ կարիքի գնահատման և անհատական սոցիալական ծրագրի
- Կենցաղային սպասարկում
- Բժշկական օգնություն և սպասարկում
- Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն:

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:

Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Տնային խնամք ծրագրում ներգրավված շառուներին ծառայությունների մատուցում՝ ըստ վերջիններիս հետ կնքված պայմանագրի, ծառայությունների մատուցման ժամանակացույցի, կարիքի գնահատման արդյունքների և անհատական սոցիալական ծրագրի:

Մասնավորապես՝

Կենցաղային սպասարկում

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական խնամողների կողմից կատարվել են տնային այցելություններ՝ ըստ նախապես կազմված աշխատանքային գրաֆիկների՝ Ա խմբի շահառուներին կատարեով օրական 2-ական այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2-ական այցեր: Սոցիալական խնամողների կողմից մատուցվել են հետևյալ ծառայությունները՝ անձնական հիգիենայի պահպանում, մարմնի ամբողջական և մասնակի խնամք, լոգանք, լվացք, սննդի պատրաստում, կերակրում, բնակարանի հարդարում, գնումներ, կոմունալ վճարումներ, արդուկ, լվացքի տեղափոխում լվացքատուն: Ըստ անհրաժեշտության շահառուներին ուղեկցել են նաև խանութ, փոստատուն, դեղատուն, բանկ՝ քարտային թոշակը կանխիկացնելու համար:

Այս եռամսյակում սոցիալական խնամողները շահառուների համար պատրաստել և ձմռան համար պահեստավորել են մուրաբաներ, կոմպոտներ:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատել է նաև լվացքատունը, որտեղ լվացել, արդուկվել են շահառուների հագուստները: Լվացքը մաքուր, արդուկված հատկացվել է շահառուներին:

Բժշկական օգնություն և սպասարկում

Հաշվետու եռամսյակում ծրագրի բուժքույրերը կատարել են այցելություններ շահառուների բնակարաններ՝ ըստ նախնական ամսական գրաֆիկների՝ Ա խմբի շահառուներին կատարելով շաբաթական նվազագույնը 2-ական այցելություն, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական նվազագույնը 1-ական: Այցելությունների ժամանակ կատարվել են միջմկանային, ներերակային ներարկումներ, վերքերի մշակում, վիրակապում, կաթիլային, դեղորայքի հատկացում, արյան մեջ շաքարի մակարդակի, արյան ճնշման, թթվածնի քանակի չափումներ, մշտադիտարկում, դեղորայքի ընդունման վերահսկում, խորհուրդներ: Բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել թաղամասային բժիշկների հետ, ստացել նրանց խորհրդատվությունը: Առողջական վիճակով պայմանավորված կատարվել են նաև շահառուների ուղղորդումներ բուժ.հաստատություններ:

1 շահառուի ոտքի պրոթեզավորման համար, համապատասխան մասնագետների խորհրդատվությամբ կատարվել է վերջույթի էլաստիկ բինտավորում, վարժություններ, մերսում՝ ամպուտացված հատվածը պրոթեզավորման համար նախապատրաստելու համար:

Թվով 2 շահառուների կատարվել է ուղեկցում թաղամասային պոլիկլինիկա և Վանաձորի ԲԿ՝ առողջական վիճակի զննության, հետագա բուժումը կազմակերպելու համար:

Բուժքույրերի կողմից շահառուներին տրամադրվել է նաև դեղորայք, ինչպես նաև պետության կողմից հատկացող դեղորայքի ստացում և հատկացում շահառուներին:

Ուղեկցման ծառայություններ, շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն

Հուլիս-սեպտեմբեր ամիսներին սոցիալական աշխատողի կողմից կատարվել է

շահառուների կարիքների վերագնահատում, կատարված փոփոխությունների արձանագրում, ինչով էլ պայմանավորված է խնամքի հետագա կազմակերպումը:
Սոցիալական աշխատողն իրականացրել է 5 շահառուների փաստագրում անապահովության գնահատման համակարգում, իսկ այն քաղաքացիներն, ովքեր ինքնուրույն կարողանում են փաստագրվել՝ ուղղորդել է ՄՍԾ Վանաձորի կենտրոն:
Կատարվել է թվով 16 շահառուի ուղեկցում պոլիկլինիկա, խանութ, բանկ՝ թոշակի ստացման համար:

<u>Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ նվերների հատկացում</u>

Տարեցների միջազգային օրվան ընդառաջ կատարվել են այցելություններ տարեցների բնակարաններ, շնորհավորել տարեցների օրվա կապակցությամբ, հանձնել նվերներ: Աշխատակիցների անակնկալ այցերը ուրախություն են պարգևել միայնակ տարեցներին՝ կտրելով նրանց միապաղաղ առօրյայից:

Յուրաքանչյուր շաբաթ կազմակերպվել են աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են անցնող շաբաթվա կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Տնային խնամք ծրագրի մասին <u>հաղորդում Հանրային ռադիոյում</u> Տարեցների միջազգային օր՝ <u>https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid034TC3kXiFQGL6pr33UASDaq2yJgaWAyXdyDQ24djDerCRdcc2t9EQSrKYgsai4fEGl</u>

Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք նկարներ և հաջողության պատմություն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Արցախում տեղի ունեցող իրադարձությունների պատճառով չեղարկվել են Տարեցների միջազգային օրվա միջոցառումները, միայն կատարվել են այցելություններ շահառուների բնակարաններ:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները, մասնավորապես.

- Կենցաղային սպասարկում
- Բժշկական օգնություն և սպասարկում
- Սոցիալ- հոգեբանական աջակցության կազմակերպում, ուղեկցման ծառայություններ
- Մշակութային միջոցառման կազմակերպում
- Խորհրդատվական օգնություն

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Սեմինարներ, վերապատրաստումներ, հանդիպումներ

- Հուլիս-սեպտեմբեր ամիսներին ծրագրի սոցիալական աշխատողը մասնակցել է Միասնական Սոցիալական Ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնին կից Վանաձորի համակարգող խորհրդի ամսեկան նիստերին՝ որպես խորհրդի անդամ: Քննարկվել են նպաստառու ընտանիքներին պետության կողմից հատկացվող սոցիալական օժանդակության հետ կապված ընթացիկ հարցեր:
- Հուլիս 1-2 ծրագրի սոցիալական աշխատողըմանսակցել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն և Word Vision, USAID կազմակերպությունների նախաձեռնությամբ իրականացված սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացին:

Շահառուներ**

N	Անուն, ազգանուն	Բնակության հասցե	Հեռախոս	ՀԾՀ	Նշումներ
1	Ռոզա Իվանյան	Վանաձոր, Լենինգրադյան 5/2-1-17	077390812	7614370015	
2	Վարսենիկ Հախվերդյան	Վանաձոր,Գր.Լուսավորիչ 14/47	2-12-84, 098366615	6714400012	
3	Էմմա Եգանյան	Վանաձոր,Նժդեհի 9/23	093484555	7410410019	
4	Ռիմա Մնացականյան	Վանաձոր, Զուխաջյան 20/16	2-82-38	5309410081	
5	Ջեմմա Հովսեփյան	Վանաձոր, Զուխաջյան 6/7	4-70-65	7410340096	
6	Ալինա Աֆրիկյան	Վանաձոր, Համբարձումյան 3/50	5-56-49, 093055649	6309460080	
7	Վերգինե Ոսկանյան	Վանաձոր, Թումայան 11/1	-	Հրաժարվել է	
8	Բավական Ոսկանյան	Վանաձոր, Թումայան 11/1	-	Հրաժարվել է	
9	Սվետիկ Գրիգորյան	Վանաձոր, Շինարարների 7/9	4-82-07	6903390022	
10	Էլիչկա Վիրաբյան	Վանաձոր, Երևանյան խճ. 147/1-42	3-79-06	5502355018	
11	Ցողիկ Քոչարյան	Վանաձոր, Զուխաջյան 16/4	094 02 92	6802400170	

			10, 2-92-10		
12	Անժելա Աթաբեկովա	Վանաձոր, Չուխաջյան 46/1	098455183	5902370027	
13	Նինա Հովհաննիսյան	Վանաձոր, Թումանյան 7/43	2-54-85	Հրաժարվել է	
14	Մարգո Ամիրաղյան	Վանաձոր, Իսահակյան 19/1	2-84-48	6410340052	
15	Վարդուշ Ունանյան	Վանաձոր, Թումանյան 9բ/16	2-11-45	7103380074	
16	Լենա Մուսաելյան	Վանաձոր, Ս-Պետերբուրգի 5/3-7-22	099 14 12 88	7004470091	
17	Սիրան Մկրտչյան	Վանաձոր, Կնունյանց 15	(099) 94-92-57	5505460029	
18	Նուբար Յարալյան	Վանաձոր, Իսակովի 23	055 22 68 84	1505370140	
19	Սեդա Խաչիկյան	Վանաձոր, Գրիբոյեդովի 6/61	07741-68-19	7211470356	
20	Ալմարա Մուսինյան	Վանաձոր, Վարդանանց 122/24	094915774	6709460274	
21	Ռիմա Վարդանյան	Վանաձոր, Պ.Սևակի 45/49	2-87-72	5301370057	
22	Թամարա Դալլաքյան	Վանաձոր, Աղայան 86/34	094 72 57 10	7011440135	
23	Մարիա Պետրոսյան	Վանաձոր, Պարոնյան 11	094769389	6002370056	
24	Սեդա Թորոսյան	Վանաձոր, Հ.Անդրանիկ 1 նրբ, 17	093653869	5103610406	
25	Միշա Վարդանյան	Վանաձոր, Հ.Անդրանիկ 1 նրբ, 17	094629461	2008420238	
26	Սոնա Բոնջուկյան	Վանաձոր, Ուսանողական 10/4	094525193	5107540236	
27	Սիրուշ Հակոբյան	Վանաձոր, Բանյոյի 10/7	4-67-41	5214390289	
28	Ալվարդ Սիմոնյան	Վանաձոր, Լուսավորիչ 26/10	(091) 67-29-44	5807490072	
29	Բավական Անտոնյան	Վանաձոր, Աղայան 95/16	2-77-23	6409520026	
30	Վլադիմիր Մամուլյան	Վանաձոր, Շինարարների 8/33	(091) 62-80-11	1909310093	
31	Նունիկ Մելիքսեթյան	Վանաձոր, Շինարարների 8/33	(091) 62-80-11	8003350077	
32	Դոնարա Մարգարյան	Վանաձոր, Հ.Անդրանիկի 1 նրբ, 3	-	7501380023	
33	Զինուշկա Քոթանջյան	Վանաձոր, Աբովյան 4	-	7104390154	
34	Ռիմա Ղամբարյան	Վանաձոր, Աղայան 6	098843515	6109270113	
35	Ալվարդ Սաֆարյան	Վանաձոր, Դեմիրճյան 5/18	077540520	7603480019	

36	Էմիլյա Վեքիլյան	Վանաձոր, Դպրոցի 6	2-16-26, 098122107	5102420029	
37	Հասմիկ Դժլկյան	Վանաձոր, Իսահակյան 2-րդ նրբ, 5/10	(077) 92-40-19	6404480239	
38	Լուսվարդ Գևորգյան	Վանաձոր, Ավետիսյան 55/57-20	093809261	5112410442	
39	Լենիկ Մելքոնյան	Վանաձոր, Մոսկովյան 54/1-21	095889848	5101421626	
40	Ալվարդ Քառյան	Վանաձոր, Լազյան փակ 4	4-16-69, 094343809	5811480024	
41	Հմայակ Առաքելյան	Վանաձոր, Տավրոս 6 փող, 13 տուն	055861165	1103400010	
42	Ալինա Մարկոսյան	Վանաձոր, Երև.խճուղի 72/21	093690680	Հրաժարվել է	
43	Արաքսի Կասեմյան	Վանաձոր, Նաիրի 5/48	098062858	7204490010	
44	Էմմա Արաբաչյան	Վանաձոր, Աղայան 95/29	099177509	7910512835	
45	Սուսաննա Պողոսյան	Վանաձոր, Գր.Լուսավորիչ 29/4	095282851	7806510010	
46	Աշխեն Գրիգորյան	Վանաձոր, Երևանյան խճ. 217	055038094	6804620585	
47	Կիմա Շամոև	Վանաձոր, Շինարարների 21/34	2-72-73, 094 99 72 73	8101370048	
48	Անժել Ղաբուզյան	Վանաձոր, Շինարարների 8/38	094324338	5101480029	
49	Նազի Շուբիտձե	Վանաձոր, Շինարարների 10/34	2-71-13, 077565406	7303390014	
50	Աշոտ Սևոյան	Վանաձոր, Աղայան 86/ 8	098717585	2909320022	
51	Վահագն Մաղաքյան	Վանաձոր, Համբարձումյան 3/50	5-56-49, 093055649	1805370065	Մահացել է հուլիսին

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս»
բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

(ստորագրություն)

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

h/h	Մատուցվող ծառայության անվանումը	Ծառայություն ստացած անձանց թիվը
1.	հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը	50
1.1	այդ թվում՝ կին	45
1.2	այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան	3
1.2.1	այդ թվում՝ կին	3
1.2.2	18-40 տարեկան	0
1.2.3	40-65 տարեկան	3
1.3	65 տարեկանից բարձր	47
2.	Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը*	Ա –5 Բ - 45
3.	կենցաղային սպասարկում.	50
4.	բժշկական օգնություն և սպասարկում.	50
5.	սոցիալ-հոգեբանական օգնություն	50
5.1	այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում	50
6.	խորհրդատվական օգնություն	8
7.	այլ ծառայություն (*նշել*) • լվացքատան ծառայություն	21

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան _____

«06» 10 2023 թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11003/23-ԼՑ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	Տարեցների ցերեկային խնամքի կենտրոն Տաշիրում
Դրամաշնորհի N	«1032-11003/23-ԼՑ»
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.01-31.12.2023
Հաշվետու ժամանակահատված	01.07-30.09.2023
Ներկայացման օր	06.10.2023
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Տիգրանուհի Տարախչյան, Ծրագրի ղեկավար

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է տարեցներին տրամադրել հետևյալ ծառայությունները՝

- Շահառուների կարիքի վերագնահատում
- Ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում
- Օրական մեկանգամյա սննդի տրամադրում՝ (շաբաթական 5 օր)
- Բուժքույրական խնամքի, խորհրդատվության և աջակցության տրամադրում՝ ներառյալ առաջին անհրաժեշտության դեղորայք
- Շահառուների հիգիենիկ խնամքի կազմակերպում, որը ներառում է լոգանքի, վարսահարդարման, լվացքի ծառայությունների մատուցում
- Շահառուի նախասիրությունների բացահայտում և տարաբնույթ ծառայությունների և միջոցառումների կազմակերպում /էքսկուրսիաներ, տոների և հիշարժան օրերի նշում/

- Զբաղվածության և ժամանցի կազմակերպում՝ ըստ շահառուի նախասիրության
- Խմբակների իրականացում՝ հաշվի առնելով շահառուների ցանկությունները և հետաքրքրությունները:

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ հիմնական գործողությունները՝

- Կենտրոնի սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շահառուների կարիքի վերագնահատում, համապատասխան գրանցումներ են կատարվել անհատական սոցիալական ծրագրերում:
- Կազմակերպվել և իրականացվել է 18 տարեցի ամենօրյա տրանսպորտով տնից կենտրոն և հակառակ ուղղությամբ տեղափոխման աշխատանքներ:
- Տարեցների կայուն առողջական վիճակը պահպանվել է բուժքույրի ամենօրյա կանոնավոր խնամքի և բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների տրամադրման միջոցով: Նախապես պարզվել է ծերերի համար անհրաժեշտ դեղերի ցուցակը և ապահովվել է հնարավորինս: Հաճախակի մարմնամարզական վարժություններն անցկացվել են բակում շահառուների շարժողականությունը բարելավելու համար, մի խումբ շահառուներ նաև օգտվել են մերսման սարքերից: Անհրաժեշտության դեպքում ուղղորդվել են բուժհաստատություն:
- Կատարվել է այցելություն հիվանդության պատճառով բացակայող տարեցներին:
- Շահառուներին տրամադրվել է սնունդ՝ ըստ նախապես մշակված սննդակարգի:
- Ապահովվել է տարեցների անձնական հիգիենան: Կամավորի օգնությամբ հարդարվել են 20 տարեցի մազերը:
- Կազմակերպվել է լվացքատան գործունեությունը, լվացվել է տարեցների հագուստը, անկողնային պարագաները և արդուկված վերադարձվել են շահառուներին:
- Իրականացվել են ասմունքի, շյուղագործության, կարի և այգեգործության խմբակների աշխատանքները՝ ըստ կազմված ժամանակացույցի:
    - Ասմունքի խմբակի խմբավարի կողմից պատրաստված նյութերով, խմբակի 9 տարեցների մասնակցությամբ, ժամանակացույցով հատկացրած ժամերին իրականացվել են միջոցառումներ:
    - Կարի խմբակի 4 տատիկների ուժերով հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի համար կարվել են 17 հատ երեսի և 4 հատ բաղնիքի սրբիչներ, նաև վերանորոգվել են պապիկների և տատիկների բերած հագուստները: Խմբակի անդամ Նորա Ջուլակյանը «Փոքրիկ Իշխան»-ի սաների համար անցկացրել է ուսուցումներ:
    - Այգեգործության խմբակի մասնակիցները շարունակել են բանջարանոցի տարածքի մոլախոտերի մաքրման և բերքի մշակման, տնկիների ջրման և բերքահավաքի աշխատանքները: Մասնակցել են 9 շահառու:

- Շյուղագործության խմբակի 2 տատիկներ խմբավարի հետ համացանցից ընտրել են գործվածքի տարբեր նախշեր և գործել են գլխարկներ, վզնոցներ և գուլպաներ:

- Իրականացվել են հետևյալ միջոցառումները՝
  - Հուլիսի 6-ին անցկացվել է Ա. Իսահակյանին նվիրված միջոցառում, որին ակտիվ մասնակցություն են ունեցել 9 շահառու:
  - Օգոստոսի 3-5-ը կենտրոնում ավցկացվել է շաշկու մրցույթ, որին ակտիվ մասնակցություն են ունեցել 13 շահառու:
  - Սեպտեմբերի 19-ին կենտրոնում անցկացվել է բարեգործության միջազգային օրվա նվիրված միջոցառում, որի ընթացքում ներկայացվել է 2007-2023թթ-կենտրոնի գործունեությունը: Միջոցառմանը ակտիվ մասնակցություն է ունեցել 9 շահառու:

Տարեցները սոցիալականացված են և ներգրավված են տարբեր սոցիալական և ժամանցային միջոցառումների մեջ: Նրանք շրջապատված են խնամքով և ուշադրությամբ, նրանց մեկուսացման և մենակության զգացումը հասցվել է նվազագույն մակարդակի:

2.2. Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

ՑԿ շահառու Ջուլետտա Էլոյանի պատմությունը՝
https://www.facebook.com/100064628296289/posts/672497348247869/

Միջոցառումների, իրականացված աշխատանքի վերաբերյալ հավաքվում և պահպանվում է անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն և նկարներ:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ և խնդիրներ չեն առաջացել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները

- Կազմակերպել և իրականցնել 20 տարեցների ամենօրյա, տրանսպորտով տնից կենտրոն և հակառակ ուղղությամբ տեղափոխման աշխատանքները:
- Անցկացնել հիգիենայի պահպանման օրեր, կամավորի օգնությամբ հարդարել տարեցների մազերը, կազմակերպել լվացքի իրականացումը:
- Շարունակել ստեղծված խմբակների բնականոն աշխատանքները և անհրաժեշտ միջոցներ ստեղծել դրանց իրականացման համար:

- Կազմակերպել սննդի տրամադրման աշխատանքները (շաբաթական 5 օր):
- Կազմակերպել մշակութային միջոցառումներ
    - Հոկտեմբերի 1-ին նշել Տարեցների միջազգային օրը
    - Հոկտեմբերի 10-ին իրականացնել «Ոսկե Աշուն» միջոցառումը
    - Նոյեմբերին կազմակերպել կենտրոնի խմբակների աշխատանքների ցուցահանդես-վաճառք՝ նախապես հրավիրվածներին ներկայացնելով 2007-2023թթ կենտրոնի գործունեությունը:
    - Դեկտեմբերի 22-ին իրականացնել Սուրբ Ծննդյան միջոցառում:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Բոլոր գործողությունները նախատեսված են եղել աշխատանքային պլանով

Շահառուներ**

N	Անուն, ազգանուն	Բնակության հասցե	Հեռախոս	ՀԾՀ	Նշումներ
1	Ավետիսյան Պայծառ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Նալբանդյանի 5	077403202	5214430035	
2	Նանյան Անիչկա	Լոռու մարզ, ք. Տաշիր, Երևանյան 264	094973024	7804520425	
3	Սուքիասյան Մանուշակ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Շահումյանի 13	093170357	5505620043	
4	Բասենցյան Շուշիկ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Էրեբունի 23, շենք 17ա	099182280	7105400036	
5	Տեր Հովհաննիսյան Մարուս	Լոռու մարզ, ք. Տաշիր, Երևանյան 289	041024668	6407360048	
6	Լուկինովա Տատյանա	Լոռու մարզ, ք. Տաշիր, Պուշկինի 162	093380557	5702330021	
7	Ավետիսյան Անժիկ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Գետափնյա 79	077850830	5701450066	
8	Դումիկյան Նելի	Լոռու մարզ, ք. Տաշիր, Լենինի շ. 12, բն. 1	093166342	5511570015	
9	Վարդանյան Զուբիկ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Պուշկինի 169	093336721	5810400019	
10	Մովսեսյան Վալերիկ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Դպրոցականների շ.21, բն. 11	098559137	2011490634	
11	Ավետիսյան Սիրանուշ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Դպրոցականներիի17, շենք 27	098648850	5504450063	
12	Պողոսյան Ասլի	Լոռու մարզ, ք. Տաշիր, Ավետիսյանի 6	098679253	5107510183	
13	Անախասյան Ալվարդ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Չարենցի 1	077773926	3512520189	
14	Մելքոնյան Վեներա	Լոռու մարզ, ք. Տաշիր, Երևանյան 113	077473017	5700450031	
15	Պողոսյան Ամալիկ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Երևանյան 135	094632502	5107363628	
16	Սուքիասյան Բուրաստան	Լոռու մարզ, ք. Տաշիր, Պուշկինի տուն 97	093153389	5408430065	

17	Մելքոնյան Սոկրատ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Կիրովի փ., տուն 113	098473018	1414510128	
18	Ավետիսյան Շուշիկ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Սայաթ-Նովաի 3	094257469	7404520010	
19	Ջուլակյան Նորա	Լոռու մարզ, ք. Տաշիր, Թեհլերյան 17	077763405	5101562491	
20	Էլոյան Ջուլետտա	Լոռու մարզ, ք. Տաշիր, Թումանյան 33	093051112	5810410022	
21	Քլոյան Մեդիկո	Լոռու մարզ, ք. Տաշիր, Անի թաղ., շենք 16, բն1	094526165	5201531229	
22	Խաչատրյան Թազագյուլ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Կ. Դեմիրճյան շ.3, բն.4	094563965	6512550056	
23	Դիլբարյան Հարփիկ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Թումանյան 18	077054214	6006480034	
24	Բասենցյան Զոիկ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի 9ա	077733588	5405420107	
25	Բաղդասարյան Սվետլանա	Լոռու մարզ, ք. Տաշիր, Անի թաղ., շենք 5, բն18	093895788	7410590017	
26	Հովեյան Անդրանիկ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Գետափնյա 121	093371405	3002370053	01.08.23մահացել է
27	Ֆահրադյան Արևհատ	Լոռու մարզ, ք. Տաշիր, Շատալովի 16	094842281	6004560022	01.08.23 դուրս է գրվել անկողնային դառնալու պատճառով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս»
բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

««Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ցերեկային կենտրոնում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

h/h	Մատուցվող ծառայության անվանումը	Ծառայություն ստացած անձանց թիվը
1.	հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը	25/25
1.1	այդ թվում՝ կին	24/23
1.2	այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան	2/2
1.2.1	այդ թվում՝ կին	2/2
1.2.2	18-40 տարեկան	---
1.2.3	40-65 տարեկան	2/2
1.3	65 տարեկանից բարձր	23/23
2.	մեկանգամյա սննդի տրամադրում	25
3.	կարիքի գնահատում	25
4.	Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում	-
5.	Խմբակների կազմակերպում	25
5.1	*Շյուղագործություն*	2
5.2	*Ասմունք*	9
5.3	*Կար ու ձև*	4
5.4	*Այգեգործություն*	9
6.	Մշակութային միջոցառումների կազմակերպում	25
6.1	Այդ թվում՝ կենտրոնից դուրս	
7.	Այլ ծառայություն՝ • տրանսպորտով տնից կենտրոն և հակառակ ուղղությամբ տեղափոխման • վարսահարդարման • լվացքի	 18 20 17

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան _____

«04» ապրիլի 2023 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

_____
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

_____
(ստորագրություն)

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Ծրագիրը ֆինանսավորում է
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարությունը

Ապրիլ-հունիս 2023

Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային և ցերեկային խնամքի ծրագրեր

{ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ} պատմություններ

* * *

Երբ մենակ եմ ու չկա զրուցընկեր՝ դաշնամուր եմ նվագում ու երգում

«Հայկական Կարիտասի» Վանաձորի «Տնային խնամք» ծրագրի շահառու Մարիա Պետրոսյանը 86 տարեկան է: Երկար տարիներ է, ինչ տատիկն ապրում է մենակ՝ հաղթահարելով մենության վախը: Զավակները, ինչպես և շատ հայորդիներ, 1990-ականներին լքել են հայրենիքը, մշտական բնակություն հաստատել Ռուսաստանի Դաշնությունում: Մ.Պետրոսյանն ունի առողջական խնդիրներ, հաճախ իրեն վատ է զգում և հենց միայնակ լինելուց էլ սրտնեղում է: «Մինչ այս ծրագրում ընդգրկվելը, երբ առավոտյան արթնանում էի ու զգում, որ լավ չեմ, շատ էի վախենում: Ախր մենակ եմ ապրում, եթե վատանամ, վայր ընկնեմ, ո՞վ պիտի իմանա. երեխաներս Հայաստանում չեն, իսկ թոռնուհիս ապրում է Գյումրիում»,- պատմում է 86-ամյա տատիկը: Արյան ճնշման հաճախակի տատանումների պատճառով Մարիա տատիկը հաճախ է ունենում առողջության վատացում, ինչի պատճառով դժվարանում է տնային գործերում (սննդի պատրաստում, տնային մաքրություն և այլն): Միայնության պատճառով հաճախ ունենում է հուզական դրսևորումներ, արտասվում է, դժգոհում իր ճակատագրից:

Ծրագրում ընդգրկվելուց հետո փոքր-ինչ փոխվել է հոգեվիճակը: Սոցիալական խնամողի, բուժքրոջ, սոցիալական աշխատողի և ծրագրային մյուս աշխատակիցների այցելությունների արդյունքում Մարիա տատիկը կյանքի հանդեպ մի քիչ լավատեսությամբ է լցվել: «Գիտեմ աշխատակիցների այցերի օրերը: Այդ օրերին շատ եմ սպասում: Նրանք օգնում են ինձ տնային գործերում, գնումներ կատարելու, կոմունալների վճարման, առողջության պահպանման հարցերում: Ասեմ նաև, որ հաճելի զրուցընկեր են: Ես սիրում եմ մարդկային շփումներ, մտերմիկ զրույցներ: Անշունչ պատերի հետ ո՞նց խոսեմ: Իսկ Կարիտասի աշխատակիցները կարողանում են սփոփել մենությունս: Նրանցից կարծես առնում եմ զավակներիս կարոտը»:

Մարիա տատիկն ունի ևս մեկ նախասիրություն: Երբ մենակ է ու գիտի, որ զրույցընկեր չկա, դաշնամուր է նվագում ու երգում՝ տան անշունչ, սառը պատերը լցնելով իր քնքուշ ձայնի ելևէջներով: Իսկ թե ինչ է կատարվում այդ պահին իր հոգում՝ ոչ ոք չգիտի...

Դրական փոփոխությունն ակնհայտ է

«Հայկական Կարիտասի» Գյումրու «Տնային խնամք» ծրագրի շահառու Նինա Կյուրեղյանը ծնվել է 1954թ., ապրում է միայնակ, անժառանգ է: Երկար տարիներ աշխատել է Տեքստիլ ֆաբրիկայում՝ մանվածքային բաժնում: Երկրաշարժից հետո չի աշխատել և իր ողջ ուժերը ներդնելով՝ խնամել է ծնողներին: Աստիճանաբար սկսել է մեկուսանալ մարդկանցից, շրջապատից: Ծնողների մահից հետո մնացել է ամբողջովին միայնակ: Նինան նաև ունի նյարդային ներոզ հիվանդություն, որի պատճառով ունի խոսքի արտաբերման խնդիրներ, ինչը ևս մեկուսանալու պատճառներից մեկն է:

Հարևանները, այդ ամենը նկատելով, դիմել են «Հայկական Կարիտասի» Տնային խնամք ծրագրին: Ծրագրի բազմամասնագիտական թիմը այցելել և կատարել է կարիքի գնահատում, որոշում է կայացվել աջակցել նրան: Սկզբնական շրջանում նա մերժում ու չէր ընդունում օգնությունը և պարբերաբար դուռը չէր բացում:

Ծրագրի սոցիալական աշխատողը պարբերաբար հաճախումից հետո շահառուի մոտ աստիճանաբար վստահություն ձեռք բերեց, և եզրեր գտնվեցին ծառայություններ մատուցելու համար: Այժմ Նինա Կյուրեղյանը շատ լավ հաղորդակցվում է բոլոր աշխատակիցների հետ, միշտ սպասում է նրանց ու ժպիտով ընդունում: Արդեն սկսել է սոցիալական աշխատողի ուղեկցությամբ դուրս գալ տանից: Մեծ ու դրական փոփոխությունն ակնհայտ է:

«Հայկական Կարիտասի» աշխատողներն իմ միակ հարազատներն են...

«Հայկական Կարիտասի» «Տնային խնամք» ծրագրի շահառու Թամարիկ Սարդարյանը 74 տարեկան է, միայնակ բնակվում է Գավառ քաղաքում: Մասնագիտությամբ գյուղատնտես է, սակայն այժմ մի շարք առողջական խնդիրների պատճառով չի կարողանում զբաղվել սիրելի մասնագիտությամբ: Ազատ ժամանակ զբաղվում է հեյունագործությամբ:

Նա արդեն սովոր է, որ ծրագրի սոցիալական աշխատողը, բուժքույրը և խնամողը ամսական մի քանի անգամ որոշակի պարբերականությանբ այցելում են իրեն, և անհամբեր սպասում է նրանց այցին, տրամադրվող աջակցությանն ու խնամքին: Ծրագրի շրջանակներում շահառուին տրամադրվող դեղորայքը, սնունդն ու խնամքը որոշ չափով թեթևացնում են հոգսերը և սոցիալական ծանրաբեռնվածությունը: Այդուհանդերձ շահառուն ծանր ֆինանսական խնդիրների առաջ էր կանգնել, քանի որ առողջական խնդիրների պատճառով ստիպված էր անընդատ բուժում ստանալ տարբեր բուժհաստատություններում և չունենալով հաշմանդամության կարգ՝ կատարել վճարումներ, ինչը ավելի էր վատթարեցրել նրա սոցիալական վիճակը:

Սոցիալական աշխատողի ջանքերով հավաքվեց ողջ թղթաբանությունը, ով և Թ. Սարդարյանին ուղեկցեց պոլիկլինիկա, այնուհետև ՄՍԾ՝ դիմում-հայտ ներկայացնելու համար, իսկ մեկ ամիս անց շահառուին ուղեկցեցին բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու: Համապատասխան փորձաքննությունն անցնելուց հետո շահառուն ստացավ հաշմանդամության 2-րդ կարգ, ինչը թույլ կտա նրան պետպատվերի շրջանակներում ստանալ անհրաժեշտ բուժումը:

«Հայկական Կարիտասի» աշխատողներն իմ միակ հարազատներն են, նրանք ամեն ինչ անում են իմ հոգսերը թեթևացնելու համար: Ես անհամբեր սպասում եմ նրանց այցելություններին, նրանք ինձ հույս են ներշնչում ապագայի հանդեպ»,-ասում է Թամարիկ Սարդարյանը:

Ապահովության զգացում այս դժվար կյանքում

«Հայկական Կարիտասի» Տաշիրի Տարեցների ցերեկային խնամքի և հոգածության կենտրոնի շահառու Ասլի Պողոսյանը ծնվել է 1951թ.-ին Վրաստանի Մարնեուլի շրջանում, հովվի ընտանիքում: 1967թ.-ին ընտանիքով տեղափոխվել և բնակություն են հաստատել Լոռու մարզի Տաշիր քաղաքում:

Կենտրոն է հաճախում 2013թ.-ի սեպտեմբերից, արդեն 10 տարի ամեն օր հաճույքով գալիս է շփվելու ու ժամանակ անցկացնելու այլ տարեցների հետ, որոնք իր համար ընտանիքի անդամներ են դարձել: Ասլի Պողոսյանը ակտիվ մասնակցում է կենտրոնում ձևավորված ասմունքի խմբակին, նաև երգում ու պարում է: Միջոցառում չի լինում, որ նա ակտիվ դերակատարում չունենա, այդպիսով դարձել է կոլեկտիվի հոգին, որին բոլորը սիրում ու գնահատում են:

«Այս կենտրոնում ես ինձ ավելի լավ եմ զգում, քան տանը: Գոհ եմ ամեն ինչից՝ սննդից, բուժօգնությունից, միջոցառումներից, կամավոր վարսավիրից... Այստեղ ապահովում են մեր զբաղվածությունը տարբեր միջոցներով, ընկերներիս հետ ուխտագնացության ենք գնում տարբեր սրբավայրեր՝ եկեղեցիներ, որոնց մասին անգամ չեմ իմացել», - երախտագիտությամբ նշում է Ա. Պողոսյանը և ավելացնում իր իմացած բոլոր օրհնանքները՝ ուղղված ծրագրի աշխատակիցներին, բարերարներին ու աջակցող կառույցներին: «Շնորհակալ եմ, որ ստեղծել են այս կենտրոնը և մեր նման միայնակ տարեցներին տալիս են ապահովության զգացում այս դժվար կյանքում»:

Երազանքներիցս մեկն իրականացավ 70 տարեկանում

«Հայկական Կարիտասի» Գյումրու Տարեցների ցերեկային խնամքի և հոգածության կենտրոնի շահառու Սամվել Գյոզալյանը 70 տարեկան է, ապրում է միայնակ: Խորհրդային տարիներին պրոֆեսիոնալ լուսանկարիչ է եղել, այսօր էլ մասնագիտական աչքն օգտակար է լինում ընկերներին լուսանկարելիս: Բայց հետահայաց նայելիս կարծում է, որ եթե աշխատելուն զուգահեռ իր ոլորտի նորարարությունները յուրացներ, այսօր դեռ մրցունակ մասնագետ կլիներ:

Թոշակառուի կարգավիճակը թույլ է տվել նոր հմտություններ ձեռք բերել. կենտրոնում նա հաճախում է «Ստեղծագործող ձեռքեր», «Փայտագործություն» և «Երգի» խմբակներ ու ավագ ընկերների հետ փայտե տարբեր իրեր է պատրաստում:

«Տարեցների զբաղվածության կենտրոն հաճախելիս, իմ կյանքում եղան զգալի դրական փոփոխություններ՝ ձեռք բերեցի լավ ընկերներ, հաճախեցի հանրապետության տեսարժան վայրեր, որտեղ որ չէի եղել: Մասնակցեցի նորաձևության ցուցադրության, թեթևացավ կոմունալ վճարումների ծախսը, ստացել եմ սննդի, տնտեսական և հիգիենիկ փաթեթներ, որի շնորհիվ թեթևացել է հոգսս: Երազանքներիցս մեկն իրականացավ 70 տարեկանում, առաջին անգամ եղա Հանրային ռադիոյում և տարեցներին հուզող խնդիրների մասին խոսեցի «Երկրորդ շնչառություն» հաղորդման ժամանակ: Հասակակիցներիս խորհուրդ եմ տալիս տանը միայնակ մնալու փոխարեն, անպայման իրենց նախասիրություններից բխող զբաղմունք գտնեն, նոր ընկերներ ձեռք բերեն ու այդ ամենով վերաիմաստավորեն իրենց կյանքը»,-ասում է Սամվել Գյոզալյանը:

Ծրագրերն իրականացնում է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ը՝ ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության համաֆինանսավորմամբ:

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Ծրագիրը ֆինանսավորում է
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարությունը

Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային և ցերեկային խնամք

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Ծրագիրը ֆինանսավորում է
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարությունը

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Ծրագիրը ֆինանսավորում է
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարությունը

Ծրագրերն իրականացնում է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ը՝ ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության համաֆինանսավորմամբ: